ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

« 07 » սեպտեմբեր 2017 թ. թիվ 414-Ա

ՀՐԱՄԱՆ

«ԵՎՐՈՖՈՒՏԲՈԼ» ԲՈՒՔՄԵՅՔԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՐՊԵՍ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ՏՈՒԳԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Եվրոֆուտբոլ» բուքմեյքերական ընկերություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունում 2017թ. հունիսի 26-ի թիվ 03/24-1/11114-17 գրությամբ հարուցված վարչական վարույթի նյութերի՝ «Եվրոֆուտբոլ» բուքմեյքերական ընկերություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը կատարել է «Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի պահանջի խախտում՝ https://www.facebook.com/efubet.am ֆեյսբուքյան պաշտոնական իր էջում հրապարակել է թվով երկու գովազդներ, որոնց բովանդակությունները համաձայնեցված չեն եղել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

«Եվրոֆուտբոլ» բուքմեյքերական ընկերություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից նախկինում նման խախտում թույլ տրված լինելու հիմքով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2015թ. հուլիսի 17-ի թիվ 495-Ա հրամանով «Եվրոֆուտբոլ» բուքմեյքերական ընկերություն» ՍՊԸ-ի

նկատմամբ կիրառվել է «Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետով նախատեսված պատասխանատվության միջոցը:

Վերոգրյալի հիման վրա՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունում 2017թ. հունիսի 26-ի թիվ 03/24-1/11114-17 գրությամբ հարուցված վարչական վարույթի շրջանակում անցկացված լսումների ընթացքում 2017 թվականի հուլիսի 31-ի կազմված թիվ 2 արձանագրությունը և 2017 թվականի օգոստոսի 3-ին կազմված թիվ 3 արձանագրությունը և ղեկավարվելով «Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետով և 14-րդ հոդվածի 3-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 18-ի թիվ 503-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 11-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթներով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով սահմանված պահանջը խախտելու համար «Եվրոֆուտբոլ» բուքմեյքերական ընկերություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ նշանակել տուգանք մեկ միլիոն երկու հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամի չափով:
2. Նշանակված տուգանքը ենթակա է վճարման Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գանձապետական 900005024162 հաշվեհամարին:
3. Նշանակված տուգանքը սույն հրամանն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո՝ ամբողջությամբ կամ մասամբ վճարված չլինելու դեպքում, ենթակա է հարկադիր կատարման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում՝ Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով:
4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ այն ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Ա. ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ**